

ՔԱՐՈՉԻՆՈՍՎԱՌ

Տ. ՀՈՎԱՅԻ ԱՐՔԵՊԻՄԿՈՂՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ
ԽՈՍՎԱԾ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԳՈՇԱԿԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ
Ա. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(6 նոյեմբերի 2005 թ.)

«Մի՛ երկնչիր, միայն հաւափա՝ եւ կեցը»:

(Ղոկ. Ը 51)

Ավելարաններեն ճառագայթող Քրիստոսի այս խոսքը բոլորիս կհաղորդե, սիրելի բարեպաշտ հավաքացյալներ, հավաքքի ճշմարդության ու անոր պարզեցած հոգևոր ներուժի մասին: Օրվա Ավելարանի դասը մեզի կպաքմե հարյուրապետի մը դսփեր մասին, որ լսած ըլլալով Դիտուի հրաշագործ բժշկություններու մասին, անձամբ անոր քով գալով կիսնդրե, որպեսզի Ան զար և իր մահամերձ դուսպրը բժշկեր: Ահա այդ միջոցին լուր կհասնի հարյուրապետին, որ իր դուսպրն արդեն մեռած էր և իզուր էր հոգնեցնել Վարդապետը:

Այս խոսակցության իրազեկ կդառնա Դիտու և Իր վճռական խոսքը ուղղելով հարյուրապետին՝ կպաքասիանե և կըսե. «Մի՛ երկնչիր, բայց միայն հավաքա»: Ապա Իր խոսքն ուղղելով հարյուրապետի դան մեջ հավաքվածներուն՝ նույնափի շեշտով մը արթնության կիրավիրե ներկաները, որոնք կողբային հարյուրապետի դսփեր մահը: Այնուհետև Քրիստոս դունեն ներս ավելի առաջանալով կմոքենա հարյուրապետի դսփեր, կընե անոր ձեռքեն ու կըսե. «Արի կաց, մանուկ դու: Եւ դարձաւ ոգի նորա, եւ կանգնեցաւ վաղվաղակի» (Ղոկ. Ը 55-56):

Օրվա Ավելարանի հոգևոր հացին հաղորդությամբ ինչպիսի սնունդ կառնենք, սիրելի բարեպաշտ հավաքացյալներ: Պարզ է, որ բոլորս ալ այս կյանքի մեջ կբախվինք որոշակի դժվարություններու, երբ հավաքքի կյանքին մեջ թուլացած ենք, ապա հուսահափությունը նաև կդարձնենք մեր կյանքի բաժինը: Դիտուի խոսքը «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւափա՝ եւ կեցը», որպես աղոթք արթնության հրավերի արձագանք կդառնա բոլորիս կյանքի մեջ, երբ մեր հոգևոր կյանքի ընթացքը շարունակաբար կիսմորվի ու կշրջմարանվի աղոթքով ու երբ փորձության պահը կհասնի, Դիտու անգամ մը ալ ևս կարձագանքե մեր հոգևոր աշխարհեն ներս, որպեսզի ամուր մնանք հավաքքի մեջ և նոր արշալույսին դեսիլքը ապրինք և ավելին, նույնը ներշնչենք մեր շրջապատին: «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւափա՝ եւ կեցը»:

Այս երևույթը բնականորեն իր արդարակայիտությունը կգիրն են նաև հասարակական կյանքի մեջ, երբ դիտու պարագաներ կդառնան բաժինը մեր կյանքին, երբ բնության արհավիրքներ հույսը գրեթե արմադախիլ ընելու չափով կվկարացնեն մարդը, բայց կրկին հավաքքի կյանքն ապրող մարդն է, որ կըսե Քրիստոսի ուղղած խոսքը ոչ միայն հարյուրապետի դսփեր, այլև բոլորի. «Արի կաց, մանուկ դու»:

Մարդկությունն այսօր պետք է իր հոգևոր եռթյան խորքին արմադացած պահե Քրիստոսի այս խոսքերը, որովհետև անոնց պարբառած արթնությամբ մեր մեջ կլուսավորվի այն գիտակցությունը, որ հրաշքները հարաժամորեն կծնին մեր եռթյան մեջ վերապրած

կյանքի ընթացքին ու շրջապատին մեջ: Կմնա սակայն, որ մենք մեր հոգու ազբերը բանանք և զգանք, որ մեզի հետ քայլողը Քրիստոս է, որ կիաստափե մեր մեջ հավաքքի զորությունը և խրոխսի կկանչե. «Արի կաց, մանուկ դու»:

Այսօրվա Ավելարանի կանչը այս կամ այն ձևով ժողովուրդներու կյանքի մեջ կդրսելովի, ան անընդհափ կրկնված է նաև մեր ազգի, Եկեղեցվո կյանքին մեջ, երբ սև մութ ամպեր ծածկած են հայոց երկինքը, բայց միշտ ալ նախախնամող Աստված Իր հավիքենական խոսքով առավել կյանք է ներարկած մեր նախնյաց հոգևոր կյանքի մեջ և լսելի է դարձուց Քրիստոսի խոսքը. «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւաքա` եւ կեցցե»:

Այսօր մեր կյանքի մեջ ամեն դեղ կիանդիպինք հարյուրապետին և իր դստեր պարագան ներկայացնող երևոյթներուն, ուր ծառան է, որ հուսահափ վազելով կուզա հարյուրապետին, որպեսզի իզուր չհոգնեցնե վարդապետին և կասեցնե անոր այցելությունը: Գիգենք սակայն Քրիստոսի պատասխանը, ուրախ ենք նաև անոր համար, որ Տայասպանյաց Առաքելական Եկեղեցվո կյանքին մեջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն կճառագայթե Քրիստոսի Ավելարանին պատգամը անթիվ գործերով, որոնք գործնական արդահայպությունն են Քրիստոսի խոսքին. «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւաքա` եւ կեցցե»:

Քրիստոսի այս խոսքը, սիրելի Վեհափառ Տայրապետ, Դուք դարձուցած եք Զեր սրբի աղոթքը, այս աղոթքով զահակալության Զեր առաջին օրերը սկսած աներկյուղ ու անկշռելի հավաքքով, նոր կյանք կներշնչեք բոլորիս և ի պատասխան Զեր անհապնում հավաքքով ու եռանդով ծավալված առաքելության Քրիստոս կիսուի բոլորիս, ինչպես խոսեցավ հարյուրապետի դստեր:

Ավելարանը կպատգամե նաև մեզի այն մասին, որ հարյուրապետի դուստրը ովքի կանգնեցավ և նոր կյանքով լցվեցավ և «դարձաւ հոգի նորա ու կանգնեցաւ վաղվաղակի»: Այս խոսքը կվերաբերի մեզի, եթե կսիրենք Տայասպանյաց Առաքելական Եկեղեցին, որուն ծննդավայրն է Սուրբ Էջմիածինը, ապա պարտ ենք համախմբվիլ ազգիս Վեհափառ Տայրապետի շուրջը, զորացնելու անոր բազուկների ուժը, որպեսզի առավել բարզավաճ դառնա Տայասպանյաց Առաքելական մեր Մայր Եկեղեցին ի Տայասպան, հԱրցախ և ի Սփյուռ աշխարհի:

Վեհափառ Տայրապետ, այս օրերուն կլոնախմբենք Զերս Սրբության՝ Լուսավորչի զահին բարձրանալու վեցերորդ տարեդարձը: Բոլորիս աղոթքն է, որ Զեր հայրապետական մականը մնա ծաղկյալ, և Դուք շաբ երկար տարիներ քաջառողջությամբ ու նորանոր իրագործումներով Տայասպանյաց Առաքելական Եկեղեցվո նավը առաջնորդեք դեպի առավել բարձունքներ:

Զերդ Սրբության առջև դրված կան բազում անհետաձելի հարցեր ու ծրագրեր, բայց Դուք այդ բոլորին անփարակույս պիտի բոլկաք, քանզի Զեր սրբին մեջ կարձագանքե Քրիստոսի խոսքը. «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւաքա` եւ կեցցե»: Զերը պիտի ըլլա նաև իրավունքը վայելելու Եկեղեցվո հոգևոր վերազարթոնքը, և մեր ժողովուրդն ականջ կուպա Քրիստոսի պատգամին. «Արի կաց, մանուկ դու»:

Զերդ Սրբության զահակալության վեցերորդ տարեդարձի առիթով մենք անգամ մը ևս Զեզի կրերենք որդիական մեր ջերմ սերն ու հավաքարմությունը, մեզի կծայնակցին նաև Արևմտյան թեմի թեմական խորհուրդի անդամները, որոնք այս օրերու, ուխտավորաբար և Զերդ Սրբության իրավերով նաև վարչական պարտականություններով կզբնվին այսպեղ: Սա պահուն, սիրելի Վեհափառ Տայրապետ, սրիրի պարզը կզգանք հանուն Արևմտյան

թեմի հոգևորականաց, թեմական խորհուրդին և ողջ հավաքացելոց մեր երախսագիրական զգացումները փոխանցել Չեզ՝ Չեր քանի մը ամիսներ առաջ Արևմբյան թեմ կագական հովվապեպական այցելության համար, որուն սրեղծած խանդավառությունն ու հորած ուրախությունը հավաքքի վերածնորդող նոր սկիզբ դարձավ բոլորի համար:

Սիրելի հոգևոր եղբայրներ և բարեպաշտ հավաքացյալներ, հունիս ամսվա առաջին քսան օրերը Հյուսիսային Ամերիկայի թեմի, Արևմբյան թեմի Հայաստանյայց Եկեղեցվո զավակաց համար դարձան պարմական: Հայոց Հայրապետը, որպես գլուխը Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցվո, Սուրբ Էջմիածնի հավաքքի քուրայեն կրակ բերավ մեզի, որպեսզի հեռավոր Ամերիկայի ափերուն ապրող մեր ժողովուրդի զավակներու սրբին մեջ անթեղված հայրենական սերն ու Եկեղեցու հանդեպ հավաքարմությունը կայծ սրանար: Հայոց Հայրապետին սրբեն բխող սիրո կրակին մեջ մենք զգացինք, Վեհափառ Տեր, Չեր սիրո չափն ու սրբին զարկը:

Հայրապետական իր ուղևորության ընթացքին Հայոց Հայրապետին պարզամներուն մեջ անընդհափ կպափկերվեին Հայրենիքն ու Սուրբ Էջմիածինը: Հայոց Հայրապետի օրինաբեր և շնորհաբաշխ այցելությունը Արևմբյան թեմեն ներս հասպարեց պարմական նոր հանգրվաններ բոլոր մակարդակներու վրա, ըլլա Եկեղեցական, ըլլա հայրենասիրական, քաղաքական և ընկերային մարզերեն ներս: Օրինվեցան իհմքերը Առաջնորդանիսպ Եկեղեցվո և շաբ ծխական Եկեղեցիներու: Հայրապետական Պատարագներով ու ժողովրդական բազմություններուն ուղղված իր խոսքերով Հայոց Հայրապետն իր զավակներուն հորդորեց գործնապես նվիրվիլ Հայրենիքին և Սուրբ Էջմիածնին: Ի պարասխան այս բոլորին, սիրելի Վեհափառ, այսօր, երբ մենք կրոնախմբենք Չերդ Սրբության զահակալության վեցերորդ փարեղարձը, մեր մեծագույն նվերը Չերդ Սրբության պիտի ըլլա առ Աստված վերաբերվորված հավաքքի մեր կյանքը և հավաքարմությունը դեպի Սուրբ Էջմիածինը և դեպի Չերդ Սրբությունը:

Չերմ սրբով, բարի մաղթանքներով գոհաբանական աղոթք մը կվերառաքենք առ Աստված Չեր կյանքի քաջառողջության ու երկար բարիների հովվապետական ծառայության համար: Հայոց Հայրապետի զահակալության բարեղարձի այսօրվան Սրբազն Պատարագին ընդմեջեն ծառայության ուխտը նոր ուխտի հրավեր մըն է բոլորիս համար, Պատարագ մը, որ կդառնա մեր կյանքի հայելին, որուն առջև կանգնած կրեսնենք և կզգանք Աստվուծո ներկայությունը, և եթե նսեմացած է մեր մեջ հավաքքի ուժը, այն ժամանակ հայելիի մեջեն լուսի ճառագայթումը կդառնա Քրիստոսի պարզամը. «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւաքա՛ել կեցցէ»:

Աներկյուղ պահենք մեր հավաքքը, մանուկին նման անսանք Քրիստոսի այս խոսքին և ապա մեր մեջ պիտի զբնենք վերակերպումի ողին ի խնդիր Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցվո և ի բարգավաճումն Սուրբ Էջմիածնի և ուրախություն մեզ և Վեհափառ Հայրապետին այժմ և միշտ և համիլիոյանս հավիտենից:

«Ճնորհը, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւսեաւսդ ամէն»: